**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | N 918-Ա |
| Տիպ | Որոշում |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (09.09.2016-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | «ՀՀ» օրաթերթ 2008.02.12/26(4363) |
| Ընդունող մարմին | ՀՀ կառավարություն |
| Ընդունման ամսաթիվ | 08.09.2016 |
| Ստորագրող մարմին | ՀՀ վարչապետ |
| Ստորագրման ամսաթիվ | 08.09.2016 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 09.09.2016 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 սեպտեմբերի 2016 թվականի N 918-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշմամբ հատկացված միջոցների հաշվին կազմակերպել և իրականացնել որոշ ապրանքների ու ծառայությունների գնման ընթացակարգ (այսուհետ՝ գնման ենթակա ապրանքներ և ծառայություններ)՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետով սահմանված ժամկետային պահանջը:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ գնման ենթակա ապրանքների և ծառայությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:
3. Հույժ գաղտնի:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Հ. Աբրահամյան**

2016 թ. սեպտեմբերի 8
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
սեպտեմբերի 8-ի N 918-Ա որոշման

## Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| NN ը/կ | CPV կոդ | Անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը (դրամ) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | 18221600/7[ուղղ.] | Կոստյում՝ ամենօրյա, կիսաբրդյա, սև գույնի | հավա-քածու | 414 | 36,000 | 14904,0 |
| 2. | 18231900/4 | Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա, սև գույնի | հատ | 253 | 15,000 | 3795,0 |
| 3. | 32321120/1 | Տեսաձայնային սարքեր | դրամ | 1 | 9,000,000 | 9000,0 |
| 4. | 51411110/1 | Ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություն | դրամ | 1 | 6,000,000 | 6000,0 |
| 5. | 92221100/1/4/1 | Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ | դրամ | 1 | 1,000,000 | 1000,0 |
| 6. | 92221100/2/4/1 | Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ | դրամ | 1 | 1,000,000 | 1000,0 |
| 7. | 92221100/3/4/1 | Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ | դրամ | 1 | 1,000,000 | 1000,0 |
| 8. | 92221100/4/4/1 | Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ | դրամ | 1 | 7,000,000 | 7000,0 |
| 9. | 92111100/1/4/1 | Կինո- և տեսաֆիլմերի արտադրության ծառայություններ | դրամ | 1 | 3,200,000 | 3200,0 |
| 10. | 79821200/3/4/1 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ | դրամ | 1 | 28,575,479 | 28575,5 |
| 11. | 31131400/1 | Հատուկ ավտոմոբիլային տեխնիկայի սարքեր և սարքավորումներ | դրամ | 1 | 20,000,000 | 20000,0 |
| 12. | 44511370/4 | Պահեստամասեր, գործիքներ և ծախսի մասեր | դրամ | 1 | 5,500,000 | 5500,0 |
| 13. | 44811700/3 | Ներկերի հավաքածուներ | դրամ | 1 | 1,626,300 | 1626,3 |
| 14. | 44831300/1 | Հերմետիկներ | կգ | 120 | 12,000 | 1440,0 |

**Հայաստանի Հանրապետության**

**կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար** **Դ. Հարությունյան**

Փոփոխման պատմություն

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |

Փոփոխված ակտ

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |